

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց

Տանկահայ գաղթականները Ռուս-Տանկական
պատերազմի ընթացքում.

Ա.

Ներկայ Ռուս-Տանկական պատերազմ սկսուելուց հա-
մարեա մի ամիս յետոյ Վեհափառ Կաթողիկոսն բարեհաճեց
կարգադրել ուղարկել պատերազմի դաշտը Թիֆլիսի առաջ-
նորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, և Երևանի թեմի փոխ-թե-
մակալ Տ. Խորէն եպիսկոպոսին, որոնց անուշով և կոնդակ
տրուեց անցեալ նոյեմբերի 15-ին, պատուիրելով պ. պ. Յով-
սէփ Խուշնուցի, Շիրվանզադէի, Յովհաննէս Թումանեանի
և Սմբատ Խաչատրեանի ընկերակցութեամբ գնալ և նախ՝
յայտնել զօրքի հրամանատարին Նորին Վեհափառութեան
օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները, երկրորդ՝ զօրա-
բանակն այցելելու ժամանակ յարմարաւոր տեղում կա-
տարել Կայսերական մաղթանք, օրհնելով զօրականներին
ու զօրքին, երրորդ՝ յորդորել բոլոր հայ զինուորներին և
կամաւորներին՝ լինել միշտ պարտաճանաչ, լաւ և օրինա-
կելի բոլոր գործերում, ինչպէս մինչև այժմ, չորրորդ՝
քննել Ռուսաց տիրած մասի հայ գիւղական ժողովրդի
վիճակն և նրանց կրօնական բարոյական և անտեսական
կացութեան մասին մանրամասն տեղեկութիւն ժողովել
և հինգերորդ՝ ուսումնասիրել հայոց ազգային կրօնական
ու Աստուածահաճոյ հաստատութիւնների, կալուածների
վիճակը, նաև նոյն շրջանի հայ հոգևորականութեան մա-
սին տեղեկութիւն քաղել, պատուիրելով վերջինիս միշտ
մխիթարել հոգեպէս և բարոյապէս հայ ժողովրդին, որ

գանձում է ծանր կացութեան մէջ, շրջագայութիւնից յետոյ մանրամասն զեկուցագիր ներկայացնել Նորին Վեհափառութեան: Սրբազանները նոյեմբերի 17-ի առաւօտեան իրենց ուղեկիցները հետ միասին արդէն ս. Էջմիածնում էին և Վեհափառ Կաթողիկոսի մօտ ճաշին հիւրասիրուելուց յետոյ՝ նոյն օրը ճանապարհուեցին դէպի Իզդիր և այնտեղից էլ Տաճկահայաստան: Տ. Մեսրոպ եպիսկոպոսն ստիպուած էր նոյեմբերի 22-ին վերադառնալ Թիֆլիս ընդունելու Վեհափառ Կաթողիկոսին՝ որը այդ օրերը ս. Էջմիածնից մեկնել էր Թիֆլիս Նորին Կայսերական Մեծութեան գալու առթիւ: Տ. Խորէն եպիսկոպոսն շարունակել էր իւր այցը վերոյիշեալ յարգելի ուղեկիցները հետ և վերադառնալով՝ ներկայացրել է Վեհափառ Կաթողիկոսին մանրամասն զեկուցումն իրենց շրջագայութեան առթիւ: Մենք այդ զեկուցումը բերում ենք այստեղ՝ մեզնից անկախ պատճառով որոշ կրճատումներ անելով:

«Նոյեմբերի 17-ին Երեկոյեան ժամը 3-ին Ձերդ Վեհափառութեան կողմից նշանակուած պատգամաւորութեան անդամները՝ Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, Սմբատ Խաչատրեանը, Յովսէփ Խունունցը, Յովհաննէս Թումանեանը, Շիրվանզադէն և ես ճանապարհ ընկանք դէպի Իզդիր, ուր հասանք Երեկոյեան 7 ժամին:

Հետևեալ օրը ժամը 10-ին ամբողջ կազմով ներկայացանք Դ-րդ զօրաբանակի հրամանատար գեներալ Օզանովսկուն, որին յայտնեցինք Ձերդ Վեհափառութեան օրհնութիւնը և բարեմաղթութիւնները Ռուսաց քաջարի զօրքերի յաջողութեան և յաղթութեան համար: Գեներալը իր ուրախութիւնը և գոհունակութիւնը յայտնեց և խնդրեց մեզ վերադարձին յայտնել Ձեզ իր որդիական ամենախոնարհ յարգանաց հաւաստիքը Հայրապետական օրհնութեան և բարեմաղթութեանց համար:

Ապա իր ուրախութիւնը յայտնեց Ձերդ Վեհափառութեան պատգամաւորութեան այցելութեան համար:

Երեկոյեան ժամը 5-ին այցելեցինք Իզդիրում եղած կամաւորներին, որոնց յայտնեցինք Ձերդ Վեհափառու-

թեան օրհնութիւնը, քաջալերեցինք և յորդորեցինք օրհնակելի վարքով որբութեամբ կատարել իրենց վրայ դրուած պարտքը:

Նոյեմբերի 19-ին ճանապարհ ընկանք դէպի սահմանը, անցանք Օրգովը, հետևեալ օրը մտանք Կարէ, որտեղ հիւանդանոց կար, այցելեցինք հիւանդներին, օրհնեցինք նրանց և շարունակելով ճանապարհը, 20-ին, երեկոյեան հասանք Արծափ հայաքնակ գիւղը. գիւղը բաղկացած է 100 տնից, թալանուած է և այժմ գիւղում չկայ ոչ խոտ, ոչ գարի, ոչ ցան: Հետևեալ օրը ժողովրդին հաւաքեցինք եկեղեցի, կատարեցինք Կայսերական մաղթանք, ապա Մեսրոպ եպիսկոպոսը քարոզ խօսեց, նախ յայտնեց Ձերդ Վեհափառութեան օրհնութիւնն և ողջոյնը և ապա հարկաւոր յորդորը կարգաց:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին հասանք Բայազէտ: Քաղաքից 5 վերտ հեռաւորութեան վրայ մեզ դիմաւորեցին քաղմաթիւ ձիաւորներ քաղաքի պատուաւորներէց, առաջնորդական փոխանորդ Տ. Ներսէս քահանայի գլխաւորութեամբ, իսկ քաղաքի սահմանում թուրքերից մէկը աղ ու հաց մատուցեց: Քաղաք մտնելով, զնացինք ուղղակի եկեղեցի, որի զանգերը ղօղանջում էին: Եկեղեցում քարոզ խօսեց Տ. Մեսրոպ եպիսկոպոսը՝ սկսելով Ձերդ Վեհափառութեան ողջոյնով և օրհնութեամբ:

Մի ժամից այցելեցինք գեներալ-նահանգապետ Դ, որին յայտնեցինք Ձերդ Ս. Օծութեան ողջոյնը և օրհնութիւնը: Գեներալ Դ փոխ այցելութեան եկաւ մեզ, երեկոյեան հրաւիրեց իր մօտ թէյի, որի ժամանակ խօսեցինք մեզ հետաքրքրող հարցերի մասին, խնդրելով նրան հովանաւորել հայ ժողովուրդին:

Որովհետև դեռ Օրգովում Տ. Մեսրոպ եպիսկոպոսը թիֆլիսից հեռագիր էր ստացել, որ վերադառնայ, ուստի նա 22-ին, առաւօտեան ժամը 6-ին վերադարձաւ դէպի թիֆլիս:

Նոյն օրը ժամը 10-ին, համաձայն նախապէս յայտարարութեան, Բայազիտի եկեղեցում կատարեցի Կայսերա-

կան մաղթանք: Եկեղեցին լի էր աղօթողներով և զօրքով, որոնց հետ եկել էին բոլոր սպաները: Եկել էին նաև գեներալ-նահանգապետը, կոմենդանտը և հիւպատոսը:

Հետևեալ օրը, առաւօտեան ժամը 8¹/₂-ին այցելեցինք նահանգապետին և ապա ճանապարհ ընկանք Դիաղին, ուր հասանք Երեկոյեան ժամը 6-ին: Մեզ ընդառաջեց կոմենդանտը և առաջնորդեց դէպի մեր իջևանատեղին: Առաւօտեան հաւաքուեցին մեզ մօտ Դիաղինում ապրող 14 հայ ընտանիքների ներկայացուցիչները, որոնց մխիթարեցի, յորդորեցի համբերութեամբ տանել պատերազմից առաջացած նեղութիւնները: Նոյեմբերի 24-ին շարունակեցինք մեր ճանապարհը, ժամը 1-ին հասանք ս. Յովհաննէս վանքը: Գիւղացիները շրջասլատեցին մեզ, պատմեցին իրենց ցաւերը, որոնց տրուեց նոյն խրատը, նոյն յորդորը, նոյն խրախուսանքը:

Ս. Յովհաննէս վանքը մի հոյակապ, վեհ վանք է, 60 արշին երկարութեամբ և 36 արշին լայնութեամբ՝ կանգնած չորս անոնի սիւների վրայ: Թէև վանքը չունի քանդակներ, գարդանկարներ, բայց նա վեհ է, ընդարձակ և մեր նախնեաց փառաց աչքի ընկնող յիշատակարաններից մէկն է: Ներսը ոչինչ չկայ, վանքը զատարկ է: Համիդիէները ոչ միայն տարել են վանքում եղածը, այլ և գիշերել են վանքում, և իրենց ձիերն էլ պահել այնտեղ, խարոյկ են վառել, որի նշանները մինչև այժմ էլ նկատոււմ է բեմի ճակատի քարերից: Վանքի բակում եղած շինութիւնները խարխուլ են և աւերակ: Վանքը վանահայր չունի և վանահայրական բոլոր իրաւունքները պահում է իր ձեռքում Բայազիտի Ներսէս քահանան, որը և առաջնորդական փոխանորդ է: Ինչպէս տեղեկացայ, վանքը ունի կալուածագրեր, դժբախտաբար անհնար եղաւ ստանալ, բայց Չերգ Վեհափառութեան անունից պատուիրեցի, ում հարկաւորն էր՝ հաւաքել կալուածագրերը և բերել ս. Էջմիածին:

Վանքի գիւղը բոլորովին թաւանուած է, գիւղացիք մնացել են ողորմելի դրութեան մէջ և օգնութեան կարօտ են:

Նոյն օրը հասանք Թաշի շայ սուֆլէ, որտեղ չորս

հայ ընտանիք կայ միայն: Հետևեալ օրը հայ գիւղերով ճանապարհ ընկանք դէպի Ղարաքիլիսա: Զիրօ գիւղի մօտ դիմաւորեցին մեզ հայերը և քիւրդերը խմբերով: Այդ գիւղը բոլորովին հայաբնակ է եղել, բայց Շամշադինովի քիւրդերը վանել են հայերին: Այժմ այդ գիւղում 12 տուն հայ կայ, որոնք աղքատութեան մէջ են ապրում: Ունեցել են եկեղեցի, բայց քիւրդերը մի քանի տարի առաջ քանդել են և քարերն էլ տարել իրենց շինութիւնների համար: Այդ գիւղից, Ռուս զօրքի մտնելուց մի քանի օր առաջ, քիւրդերը փախցրել էին մի աղջիկ, որը գեներալի պահանջով վերադարձրել էին 12 օր պահելուց յետոյ, թէև մինչև այժմ էլ քիւրդերը զինուած պատրաստուում են նորից յարձակում գործել և օրիորդին տանել:

Հետզհետէ մեզ սկսեցին դիմաւորել բազմաթիւ ձիաւորներ, որոնք ուրախ-ուրախ մեր շուրջը ձիաբշաւ էին կատարում: Զիւաւորների մէջ էին Ղազի, Մանկասար, Մազրա, Զիրօ, Խըզըր գիւղերի հայերը իրենց քահանաների հետ միասին: Հասանք Ղազի գիւղ, գիւղացիները գիւղի ծայրում դիմաւորեցին մեզ. մեծ, փոքր, ծեր, կին, երիտասարդ բոլորը դուրս էին եկել: Անհամար խմբով շրջապատել էին մեզ և ուրախութեան արցունքը նկատուում էր բոլորի աչքերին: Ժողովուրդը փառք էր տալիս Աստուծուն, ուրախանում էր, յանձին մեր տեսնելով իր պաշտպանին, օրհնում էր Զերդ Վեհափառութեան կեանքը՝ Զեզ առողջութիւն և երկար կեանք մաղթելով: Ուղղակի իջայ եկեղեցի, տեսարանը սրտաշարժ էր, մանաւանդ, երբ քարոզից յետոյ, դատարկ, թալանուած եկեղեցում չոգած երգեցինք «Ապաւինեցաք ի խաչ Քո» շարականը, որին մեզմ ձայնակցում էր զուլումի աշխարհի տանջուած ժողովուրդի լացը:

Երկու ժամ հանգստանալուց և ժողովրդին մխիթարելուց յետոյ՝ շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Եօնջալի հայ գիւղը: Այդտեղ նոյնը կատարուեց՝ ինչ որ Ղազի գիւղում: Անօգնական հայ ժողովուրդը մեր առաջ էր բացում իր խոցոտուած սիրտը և յորդ արցունքներով

Թեթևացնում իր վիշտը: Եօնջալուի ժողովրդին առաջնորդում էր դէպի մեզ գիւղի ծխատէր Տէր Յովնաննէս Տէր Յովնանեան քահանան, որն որպէս արթուն հովիւ պաշտպանում է իր ժողովրդին:

Դառնացած սրտով ճանապարհ ընկանք դէպի Ղարաքիլիսա, որին չհասած, Բոռ գետի ափին մեզ սպասում էին ժողովրդի ահագին բազմութիւն՝ տեղական քահանայի և ոստիկանի առաջնորդութեամբ, որոնք և աղ ու հաց մատուցին մեզ: Ժողովուրդը մեր ողջոյնին ցնծութեամբ պատասխանեց. «Բարի էք եկել, ձեր եկած ջամբին ղուրբան»: Նոյն տեսարանը և նոյն արցունքները այստեղ ևս կըրկնուեցին:

Ղարաքիլիսան կենդրոնական գիւղաքաղաք է համարւում, 2000 տուն բնակչով, որից մօտ 500 հայեր են: Թէև մեծամասնութիւնը թուրք և քիւրդ են, բայց թէ վաճառականութիւնը և թէ արհեստները հայերի ձեռքումն են. իսկ թուրքերը հարուստ են իրենց գրաւումների և հարստահարութեանց շնորհիւ:

Թէ այդ օրը երեկոյեան և թէ հետևեալ երկու օրերը այցելում էին մեզ Ղարաքիլիսայի և շրջակայ գիւղերի հայերը: Ամէնքը զանգատուում էին, որ թալանուած են, նեղուած են և դատ էին խնդրում: Այցելում էին ինձ յայտնի քիւրդ ցեղապետներ և թուրք տեղացիներ՝ դարձեալ զանգատներով:

Հետևեալ օրը նոյեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին այցելեցինք զօրքերի հրամանատար գեներալ լէյտենանտ Ա. : Յայտնելով Ձերդ Վեհափառութեան Հայրապետական օրհնութիւնը և բարեմաղթութիւնները, ես յայտնեցի նրան իմ այցելութեան նպատակը: Յայտնեցինակ, որ ժամը 12-ին կատարելու եմ Կայսերական մաղթանք: Ժամը 12-ին կատարեցի Կայսերական մաղթանք, եկեղեցին և շրջակայքը լի էին աղօթողներով:

Նոյեմբերի 28-ին եղայ Ալաշկերտ, այդտեղ նոյնպէս ժողովուրդը նեղ վիճակում էր: Եկեղեցում կատարեցի ժամերգութիւն և ապա հոգեհանգիստ Ալաշկերտի ծխատէր

Տէր Յովսէփ քահանայի գերեզմանի վրայ: Յիշեալ քահանային, նախ քան Ռուս զօրքի մուտքը, թուրքերը կտոր կտոր էին արել, և ժողովուրդը թաղել էր քահանային եկեղեցու մէջ: Ալաշկերտի ճանապարհին այցելեցինք Իրիցու գիւղը, իսկ հետևեալ օրը Ձէգգեան, Խաստուր, Չիլկանի հայ գիւղերը:

Որովհետև ճանապարհները քրդերն և համիրդիէները բռնել էին, ուստի ոչ մի հնարաւորութիւն չունեցանք Ձէգգեանից անցնելու դէպի Դէլի Բաբա և Սարիղամիշ, ուստի ստիպուած եղանք վերադառնալ դէպի Իգդիր, ճանապարհին մտնելով Մուսուն հայ գիւղը: Մաստուր գիւղում ժամերգութիւն կատարեցի նաև հայ կաթոլիկ եկեղեցում:

Դեկտեմբերի 4-ին վերադարձանք Իգդիր, հետևեալ օրը եկանք ս. Էջմիածին ներկայանալու Ձերդ Վեհափառութեան և ապա շարունակելու մեր ճանապարհը:

Այս շրջանի ճանապարհորդութեան համառօտ նկարագիրը տալուց յետոյ, կարևոր եմ համարում կանգ առնել այն հարցերի վրայ, որոնք առաջ են եկել մեր ճանապարհորդութեան ժամանակ:

..... Նախ քան պատերազմ յայտարարելը, համիրդիէները տեղաւորուած են եղել Ալաշկերտի և Բայազիտի շրջանի գիւղերում և գիւղաքաղաքներում, մեծ չափով հայ գիւղերում, որոնք գտնուում են ճանապարհի վրայ: Համիրդիէները ապրել են ժողովրդի հաշուով: Աւելորդ համարելով առաջ բերել, թէ իւրաքանչիւր գիւղից որքան պաշարեղէն են պահանջել և ստացել, օրինակի համար առաջ կրբերեմ Ղազի հայ գիւղից ստացածը: 63,900 հոխա գարման, 38,800 խոտ, 28,500 ցան, 3014 փութ ցորեն, 776 գարի, 3 հոխա էլ իւղ: Այս բոլորի զիմաց տուել են լոկ ստացական-մաղբարա: 110 տուն ունեցող գիւղի համար այնքան տուրք տալը, ինքն ըստ ինքեան, ծանր է և այդ հաշուով էլ ստացել են մնացեալ գիւղերից:

Երբ տաճիկները որոշել են յետ նահանջել, համիրդիէները, գիւղերից հեռանալուց առաջ, թալանել են գիւղերը

և թալանն էլ տարել են գիւղացիները սայլերով և եզնե-
 րով: Բացի թալանից կանայք ենթարկուել են ծանր նե-
 դութիւնների ու բռնաբարութիւնների: Ալաշկերտի շրջանի
 Խաչլու հայաբնակ գիւղում համիրդիէները այր մարդկանց
 փակել են մի քանի գոմերում և ապա գազանաբար բռնա-
 բարել են բոլոր կանանց ու օրիորդներին և անչափահաս
 աղջիկներին: Այդպէս վարուել են և այլ շատ գիւղերում:
 Համիրդիէների անցնելուց յետոյ, թալանը շարունակել են
 շրջակայ քիւրդ գիւղացիները, որոնցից շատերը թողել են
 իրենց տները և հետևել են զօրքին: Երբ Ռուս զօրքերը
 մօտենալիս են եղել, հայերը սիրտ են առել և անցել են
 մօտակայ քիւրդ գիւղերը, գտնելու, վերադարձնելու իրեն-
 ցից տարածը, և շատերին յաջողուել է մի բան ձեռք բերել
 կամ գտնել իրենց կորցրածը.....: Ալաշկերտ
 գնալիս ինքս ականատես եղայ, թէ ինչպէս քիւրդերը յար-
 ձակուել էին Խաչլու հայ գիւղի վրայ և, ինչպէս պատմեց
 մեզ ուղեկցող սպան, քիւրդերը ամբողջապէս կը ջնջէին
 գիւղը, եթէ ժամանակին օգնութեան չհասնէին Ալաշկերտի
 հայերը և կազակները: Սպան մի առանձին բաւականու-
 թեամբ ասաց, որ ինքը առաջին անգամ բարոյապէս վար-
 ձատրուած է հայերի կեանքը փրկելու համար: Այդ յար-
 ձակման ժամանակ սպանուել էին երկու հայեր, որոնց
 դիակներն անգամ գազանաբար պղծել էին քիւրդերը:

Հայերի դրութիւնը.

Եթէ պատերազմական դրութիւնը չլինէր և տեղական
 ազգաբնակութիւնը ապրելիս լինէր իւր նորմալ կեանքով,
 իմ ստացած տպաւորութիւնը այն կը լինէր, որ Տաճկա-
 հայաստանի հայ գիւղացիների վիճակը ընդհանրապէս, ըստ
 տնտեսականի, անհամեմատ լաւ է, քան մեր Նոր-Բայա-
 զիտի, Շիրակի, Արարանի գիւղացիների դրութիւնը: Գիւ-
 ղացիները թէև ենթակայ են հարստահարութեանց և հար-
 կերով ծանրաբեռնուած են, բայց այնքան շատ և լաւ ար-
 գաւանդ հող ունին, որ ստացած եկամուտով ապրում են

և իրենք և կերակրում հարստահարիչներին: Մեծ ճանապարհի վրայ գտնուած զուտ հայաբնակ Մուսուն, Արծափ, Երիցագիւղ, Ղազի, Եօնջալի, Խաստուր, Զիլկանի, Զէտգեան գիւղերում ես տեսայ շատ տներ, որոնք այնպիսի գոմեր ունէին, որ համարձակ 100—150 գլուխ տաւար կարելի էր տեղաւորել, գոմեր, որոնցում 500—1000 ոչխար կարելի էր տեղաւորել: Յորենի ամբարները սովորական բաներ են: Եւ զարմանալու չէ, որովհետեւ բացի գաղթականներէց, տեղացիներէց իւրաքանչիւր տուն առնուազն 30 դեսետտին հող ունի, իսկ հողն աննման է, սևահող, փխրուն:

Այժմ գիւղացիների տնտեսական դրութիւնը անմխիթար է: Զունին խոտ, գարի, ցան

Վիճակագրական տեղեկութիւններ:

Բայազիտի վիճակն ունի մի քաղաք — Բայազէտ, հինգ գիւղաքաղաքներ՝ Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիազին և Պաղնոս և 34 գիւղ: Վիճակի հայ բնակչութեան թիւը մօտ քառասուն հազար է:

Մեր ճանապարհի շուրջը եղել են հետևեալ գիւղերը, և գիւղաքաղաքները, որոնք այժմ գտնուում են Ռուսաց տիրապետութեան ներքոյ:

Մուսուն զուտ հայաբնակ	92	տուն	
Արծափ	»	»	105
Բայազէտ խառն	1000	տնից	310 տ. հայ
Դիազին	400	»	8 » »
Թաշի չայ	210	»	16 » »
Զիրօ	50	տուն քիւրդ	12 » »
Խըղըր	40	»	20 » »
Մանկասար	60	տուն քիւրդ	60 » »
Մազրա	50	»	63 » »
Ղազի զուտ հայաբնակ			125 » »
Եօնջալի »	»	»	130 » »

Երանոս	50 տուն քիւրդ	25 » »
Երիցու գիւղ զուտ հայաբնակ	110 » »	
Ալաշկերտ խառն	500 տուն	150 » »
Մուլա Սուլէյման զուտ հայաբնակ	80 հայ լուսաւոր.	և 65 տ. հայ կաթոլ.
Ջէղզան զուտ հայաբնակ	85 տուն հայ	
Խաստուր	89 տ. հայ-լուս.	82 տուն հայ կաթ.
Պոշեան	16 տ. քիւրդ	20 տուն հայ
Չիլկանի զուտ հայաբնակ	60 » »	
Էխնթափէ	» »	80 » »
Ղայարէզ	» »	60 » »
Խաչլու	» »	100 » »
Համաղ	» »	150 » »
Երիցու գ.	» »	50 կաթոլիկներ
Ղարաքիլիսա խառն	1500 տ., որից	500 տուն հայ
Աշխալէ	122 տուն,	որից 20 տուն հայ
Հայ ազգաբնակիւթիւն ունեցող այս բոլոր գիւղաքա-		
ղաքները և գիւղերը այժմ կտրուած են իրենց կենտրոնից		
և կարելի է ասել, միանգամայն զուրկ են հոգևոր մխիթա-		
րութիւնից:		

Ե կ ե ղ ե ց ի ն ե ր .

Տեսածս բոլոր եկեղեցիների մէջ, ի բաց առեալ ս. Յովհաննէս վանքը, միակ օրինաւոր վայելուչ եկեղեցին Արծափ գիւղինն է, որը քարաշէն, ութ անկիւնանի զմբէթով եկեղեցի է: Մնացածները, բացի Բայազիտի եկեղեցին, որը բաւական ընդարձակ է և երեք սեղան ունի, հասարակ, խղճուկ, գիւղական մեծ տնակներ են: Այդ աղքատիկ եկեցիները աւելի խղճուկ էին երևում իրենց դատարկութեամբ: Եկեղեցիներում ոչինչ չի մնացել, ոչ եկեղեցական գիրք, ոչ անօթ, ոչ վարագոյր, ամեն ինչ քրդերը կամ տարել են և կամ այրել են:

Ք ա հ ա ն ա ն ե Ր .

Շրջանի քահանաներն առհասարակ շատ խղճուկ են: Մեր քահանաների մէջ ևս կան խղճուկներ, բայց տեսածներս ողորմելի էին: Ուսում և կրթութիւն չունին, հագուստները մեծ մասամբ ցնցոտիներ էին, և պէտք է խոստովանեմ, որ տեսածս երկու հայ կաթողիկ քահանաները աւելի մխիթարական տպաւորութիւն թողին վրաս: Նկատելի էր նաև, որ ժողովրդի աչքում քահանաները ոչ մի համարում չունէին և նիւթապէս բաւարար չափով չեն վարձատրում:

Տեսածս քահանաների մէջ աչքի էր ընկնում Եօնջալուի Տէր Յովհաննէս քահանայ Տէր Յովնանեանը, որը, մանաւանդ ներկայ հանգամանքներում, միակ արթուն, իր հօտը պաշտպանող հովիւն է: Նրա որդին սպանուել է Ղարաքլի-լիսայում: Կսկիծը իր սրտում մեռցնելով, քաջ հովիւը մոռացած իր վիրտը, սփոփում, մխիթարում է իր հօտը և նրա շահերը պաշտպանում իշխանութեան առաջ: Ինձ հետ եղած պատգամաւորութիւնը պարտք զրեց ինձ վրայ՝ խընդրել Ձերդ վեհափառութիւնից վարձատրել յիշեալ քահանային լանջախաչով»:

Ապա Տ. Խորէն եպիսկոպոսը պատգամաւորութեան հետ շարունակելով իւր ճանապարհորդութիւնը գէպի Կարս-Սարիղամիշ, զեկուցանում է այն կողմերի հայ գաղթականների մասին հետևեալը:

«Ռուս-Տաճկական պատերազմի պատճառով գաղթել են և տեղաւորուել Ռուսաց Բասենի, Տաճկական Բասենի և Ղարսի շրջանի գիւղերում: Իւզվերանից 130 տուն, Քեօփրի քեօյ 192, Եագանի 124, Գումաձոր 120, Իլխուա 132, Պարնաքար 40, Խոսրովերան 30, Թէզովերան 38, Գրդարազ 60, Ծանձաղ 50 և էղէպատ 130, ընդամենայն 1046 տուն, 8160 շունչ, որից 3714 արական և 4446 իգական:

Ուրախալի է, որ Սարիղամիշի հայերը, որոնց վրայ սկզբում ծանրացել է փախստականներին պատսպարելու

գործը, ամենայն սրբութեամբ կատարել են իրենց պարտքը դէպի իրենց թշուառ եղբայրները և քոյրերը, և մօտ 220 ընտանիքի ապաստան են տուել առանց որևէ վարձատրութեան:

Վերոյիշեալ 11 գիւղերի փախստականները ունեցել են 9815 անասուն (եզ, գոմէշ, մատակ, կով) 411 ձի և աւանակ, 20895 մանր անասուններ (հորթ, ոչխար, այծ), 20037 խալուար ցորեն ու գարի, 3045 սայլեր: Բացի վերոյգրեալներէից ունեցել են երկրագործական գործիքներ, սեպհական տներ, տեղաշոր, տուն, պարագաներ և այս բոլորը մօտաւոր գներով հաշուելով՝ կ'երևայ, որ գաղթականների փնասը հասնում է մօտ երկու միլիոն գումարի: Բացի նիւթական փնասից, 11 գիւղի գաղթականները տուել են նաև մարդկային զոհեր: Այդ գիւղերի ընտանիքների անդամներից երկրում մնացել են 168 հոգի, որոնք հարաւորութիւն չեն ունեցել փախչելու և որոնց վիճակն անյայտ է: Փախուստի ժամանակ և յետոյ վախճանուել են 35 հոգի, իսկ հիւանդների թիւը հասնում է 75-ի»:

Շարունակելի

Բարգէն վարդապետ:

